ՀՀ շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար Ս. Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թվականի նոյեմբերի 8-11-ը Շվեյցարիայի Համադաշնության Ժնև քաղաք գործուղման վերաբերյալ

Գործուղվող անձ

Իրավախորհրդատու Մարի Չաքրյան

Երկիր/քաղաք/ժամկետ

Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև, 2023 թվականի նոյեմբերի 8-11-ը:

Հրավիրող կողմ

ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Բնապահպանական բաժին, «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիայի քարտուղարություն:

Նպատակը

Մասնակցել տեսեկատվության հասանելիության աշխատանքային խմբի 8-րդ հանդիպմանը և արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին տեղեկության հանրային հասանելիության միջազգային աշխատաժողովին:

Մասնակիցների շրջանակ

Աշխատանքային խմբի անդամներ, ՄԱԿ ԵՏՀ և այլ հարակից համաձայնագրերի քարտուղարությունների ներկայացուցիչներ, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ի դեմս «Էկո ֆորում» ցանցի անդամների:

Հայաստանից հանդիպմանը մասնակցել են նաև Երևանի Օրհուս կենտրոնի կազմակերպիչ Սիլվա Այվազյանը և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) ՀԿ ներկայացուցիչ Մանե Մադոյանը:

Օրակարգում.

- ✓ Բնապահպանական տեղեկատվության հանրային հասանելիություն. Բնապահպանական տեղեկատվության շրջանակը, շրջակա միջավայր արտանետումների վերաբերյալ տեղեկության հասանելիություն, երրորդ անձանց կողմից պետական մարմիններին տեղեկատվության տրամադրում:
- ✓ Վերջին և նախատեսվող զարգացումների գույքագրում, մասնավորապես կապված Կողմերի յոթերորդ հանդիպման ժամանակ ընդունված էլեկտրոնային տեղեկատվական

գործիքների առավել արդյունավետ օգտագործման վերաբերյալ թարմացված առաջարկությունների (ECE/MP.PP/2021/2/Add.2) հետ:

- ✓ Գործողություններ այլ միջազգային ֆորումների շրջանակում:
- ✓ Այլ հարցեր:

Ելույթներ

Ի պատասխան ԻԱԿ ՀԿ ներկայացուցչի Բաց կառավարման գործընկերության շրջանակում իրական շահառուների վեևաբերյալ տեղեկությունների ներկայացման գործընթացի կարևորության, միաժամանակ բացերի մասին ելույթի, նշել եմ, որ գործընթացը կամավորական բնույթ է կրում և Հայաստանի առաջամարտիկ լինելու հանգամանքն արդեն իսկ խոսում է պատրաստակամության մասին, ինչպես նաև կարևորել եմ ՀԿ-ների դերը խնդիրների վերհանման և արդյունավետ համագործակցության ձևավորման գործում:

Արդյունքներ

Աշխատաժողովի մասնակից կազմակերպությունները ներկայացրեցին նոր գործիքներ, որոնք առավել դյուրին են դարձնում արտադրանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվարկի ընթացակարգերը, օրինակ.

- Ազգային մակարդակով սահմանված ներդրումներում (NDCs) «Շրջանաձև տնտեսության ներդրման կիրառելի գործիքակազմը»՝ ի նպաստ ընդլայնվող հավակնությունների և NDC-ների իրականացման https://www.learningfornature.org/en/building-circularity-into-nationally-determined-contributions/,
- էլեկտրոնային տեղեկատվական տարաբնույթ օրինակելի գործիքները, որոնք հասանելի են ՄԱԿ ԵՏՀ կայքում. https://unece.org/env/pp/eit-case-studies
- Թվային և կայուն առևտրի խթանման ձեռնարկը՝ https://unece.org/sites/default/files/2022-01/ECE_TRADE_467E.pdf :

Աշխատանքային խումբը որոշվեց,

✓Կոչ անել կողմերին՝ տարածելու նոր և արդյունավետ գործիքների մասին տեղեկությունը,

✓Խթանել էլեկտրոնային տեղեկատվական գործիքների և այլ համապատասխան միջազգային ֆորումների գործունեության վերաբերյալ թարմացված հանձնարարականների կիրառումը,

✓Նպաստել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում ավելացված երեխաների՝ մաքուր, առողջ և կայուն միջավայրում ապրելու իրավունքի վերաբերյալ նոր դրույթի ու դրանից բխող գործողությունների իրականացմանը

✓ Ստեղծել Օրհուսի կոնվենցիայի պարզեցված տեքստ և էկոկրթական նյութեր երեխաների համար: Նպաստել դրանց ներդրմանը դպրոցական ծրագրերում:

Պայմանավորվածություններ

Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության համակարգող Մարինա Յանուշի հրավերով մասնակցել եմ երեխաների առողջ միջավայրում ապրելու իրավունքի իրացման հարցերով առանձին քննարկման: Մտքերի փոխանակման արդյունքում որոշվեց կիսվել ազգային

մակարդակում հասանելի երեխաների համար նախատեսված նյութերով: Որոշվեց ձևավորել աշխատանքային խումբ, որի նախնական կազմում ընդգրկվեցինք Երևանի Օրհուս կենտրոնի կազմակերպիչ Ս. Այվազյանն ու ես՝ Մ. Չաքրյանս: Փրկեք երեխաներին (Save the children) բարեգործական կազմակերպության ներկայացուցիչն առաջարկեց ազգային մակարդակում բանակցություններ տանել կազմակերպության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցչությունների հետ ինչպես մեկնարկած ծրագրերում, այնպես էլ պլանավորման ժամանակ հաշվի առնելու երեխաների իրավունքների պաշտպանության այս նոր գործընթացը: Լրացուցիչ տեղեկություն և համագործակցության հաջորդիվ քայլերի մասին կոնվենցիայի քարտուղարությունը կտեղեկացնի լրացուցիչ:

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու,
Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող՝

Մ. Չաքրյան

14.11.2023